ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

ՍԿԶԲԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 13 Սեպտեմբեր 2021 **232** *DIMANCHE, Le 13* Septembre *2021*

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ԽԱՉՎԵՐԱՑ

Տօն Վերացման Սրբոյ Խաչին

EXALTATION DE LA SAINTE CROIX

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(6.14-18)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

(3.13-21)

Les lectures de la Bible d'aujourd'hui

GALATES 6.14-18

JEAN 3.13-21

Պատարագիչ եւ քարոզիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Célébration et l'Homélie

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան ժամերգութիւն -	9:30-ին
Office Matines à	9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում -	10:30-ին
La Sainte Messe – En direct à	10h30
Ռեհանի Օրհնութիւն եւ Մատաղօրհնութիւն - ուղիղ սփռում	12:00-ին
Bénédiction du Basilic et Madagh – En direct à	12h00

Diacres – Acolytes

Organist: M Vahram Sargsyan

Chœur "Gomidas"

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES DE DIMANCHE

THE SUNDAY READINGS

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 6.14-18

14 Բայց ես ամե՛նեւին պիտի չպարծենամ, այլ միայն մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի խաչով. անով աշխարհը խաչուած է ինծի համար, ես ալ՝ աշխարհի: 15 Որովհետեւ Քրիստոս Յիսուսով ո՛չ թլփատութիւնը որեւէ ազդեցութիւն ունի, ո՛չ անթլփատութիւնը, հապա՝ նոր արարած ըլլալը: 16 Խաղաղութիւն ու ողորմութիւն բոլոր անոնց վրայ՝ որ այս կանոնին համաձայն կ՚ընթանան, եւ Աստուծոյ Իսրայէլին վրայ: 17 Ասկէ ետք ո՛չ մէկը թող անհանգստացնէ զիս. որովհետեւ ես մարմինիս վրայ կը կրեմ Տէր Յիսուսի վէրքին սպիները: 18 Եղբայրնե՛ր, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ: Ամէն:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 3.13-21

13 Ո՛չ մէկը երկինք բարձրացաւ, բացի անկէ՝ որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ երկինքն է: 14 Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց օձը անապատին մէջ, այնպէս պէտք է որ բարձրանայ մարդու Որդին. 15 որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:

16 Որովհետեւ Աստուած ա՛յնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին, որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը: 17 Քանի որ Աստուած աշխարհ ղրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՝ որպէսզի աշխարհը փրկուի անով: 18 Ա՛ն որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ա՛ն որ չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին: 19 Սա՛ է դատ-ապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց գործերը չար էին: 20 Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ՚ատէ

լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսզի չկշտամբուին իր գործերը: 21 Բայց ա՛ն որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործուեցան Աստուծմով»:

Galates 6.14-18

14 Mais pour moi, à Dieu ne plaise que je me glorifie sinon en la croix de notre Seig-neur Jésus-Christ, par lequel le monde m'est crucifié, et moi au monde! 15 Car en Jésus-Christ ni la Circoncision, ni le prépuce n'ont aucune efficace, mais la nouvelle créature. 16 Et à l'égard de tous ceux qui marcheront selon cette règle, que la paix et la miséricorde soient sur eux, et sur l'Israël de Dieu. 17Au reste, que personne ne me donne du chagrin; car je porte en mon corps les flétrissures du Seigneur Jésus. 18 Mes frères, que la grâce de notre Seigneur Jésus-Christ soit avec votre esprit; Amen!

Jean 3.13-21

13Car personne n'est monté au ciel, sinon celui qui est descendu du ciel, [savoir] le Fils de l'homme qui est au ciel. 14Or comme Moïse éleva le serpent au désert, ainsi il faut que le Fils de l'homme soit élevé; 15Afin que quiconque croit en lui ne périsse point, mais qu'il ait la vie éternelle, 16Car Dieu a tant aimé le monde, qu'il a donné son Fils unique, afin que quiconque croit en lui ne périsse point, mais qu'il ait la vie éternelle. 17Car Dieu n'a point envoyé son Fils au monde pour condamner le monde, mais afin que le monde soit sauvé par lui. 18Celui qui croit en lui ne sera point condamné ; mais celui qui ne croit point est déjà condamné ; parce qu'il n'a point crut au Nom du Fils unique de Dieu. 19Or c'est ici le sujet de la condamnation, que la lumière est venue au monde, et que les hommes ont mieux aimé les ténèbres que la lumière, parce que leurs œuvres étaient mauvaises. 20Car quiconque s'adonne à des choses mauvaises, hait la lumière, et ne vient point à la lumière, de peur que ses œuvres ne soient censurées. 21Mais celui qui s'adonne à la vérité, vient à la lumière, afin que ses œuvres soient manifestées, parce qu'elles sont faites selon Dieu.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԵՐ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ»
Արծաթեայ Խաչ, 18-րդ դար:

Շաբաթ, 11 Սեպտեմբեր 2021

Նաւակատիք Սուրբ Խաչի

Խաչվերացի տօնին նախորդող Շաբաթ օրը նաւակատիք է: Այդ օրը, ինչպէս նաեւ Խաչվերացին յաջորդող Երեքշաբթի, Չորեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը Սուրբ եկեղեցւոյ տօնն է:

Կիրակի, 12 Սեպտեմբեր 2021

Խաչվերաց

Խաչվերացը Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն վերջինն է: Ան Խաչին նուիրուած տօներէն ամենակարեւորն է, որովհետեւ նուիրուած է գերութենէն խաչի վերադարձին եւ փառաբանութեան յիշատակին: Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ Խաչվերացը կը տօնեն Սեպտեմբեր 11-17-ի ինկած ժամանակահատուածին հանդիպող Կիրակի օրը: Սուրբ Խաչը կը տօնուի ի յիշատակ Տիրոջ խաչափայտի՝ Պարսկական գերութենէն Երուսաղէմ վերադարձին եւ Գողգոթայի մէջ կանգնեցման (վերացման): Այստեղէն է որ տօնը կոչուած է Խաչվերաց:

Սուրբ խաչի գիւտէն յետոյ Հեղինէ թագուհին Սուրբ Կոստանդիանոս կայսրին հրամանով Գողգոթայի վրայ կառուցեց «Սուրբ Յարութեան» տաճարը եւ այնտեղ կանգնեցուց Տիրոջ խաչափայտը: Ապա նաեւ՝ Բեթղեհէմի մէջ եւ այլ տնօրինական վայրերուն մէջ տաճարներ եւ մատուռներ կառուցեց: Թագուհին հրամայեց մեծ հանդիսաւորութեամբ ութը օր տօնել սուրբ տաճարներու նաւակատիքը: Այդ օրէն կարգ սահմանուեցաւ ամէն տարի՝ Սեպտեմբեր 13-ին տօնել Խաչի նաւակատիքը եւ Եկեղեցւոյ տօնը, իսկ Սեպտեմբեր 14-ին՝ Խաչի տօնը: Այդ օրը Յակոբոս Տեառնեղբօր օրինակով քահանայապետը կը բարձրացնէր Տիրոջ խաչափայտը հաւատացեալներու պահպանութեան համար, այդ պատճառով ալ տօնը կոչուեցաւ «Խաչվերաց»: Խաչվերացի տօնը իր վերջնական հաստատումը ստացաւ հետագային, երբ իր հզօրութեան գագաթնակէտին հասած Պարսկաստանի Խոսրով Ամբարիշտ թագաւորը 610 թուականին կը կամենար իրեն հպատակեցնել Հերակլ կայսրը եւ նամակով անոր կ'առաջարկէ գալ, ընդունիլ իր գերազանցութիւնը եւ պաշտել իրեն: Ան, մեծ զօրք տալով իր Խոռեմ զօրավարին, անոր ուղարկեց Յունաց աշխարհ, եւ վերջինս սկսաւ աւերել ու մեծ աւար վերցնել պաղեստինցիներու աշխարհէն:

Խոռեմ զօրավարը 614 թուականին, տասնինը օր շարունակ պաշարելով քաղաքը եւ փորելով քաղաքի հիմքերը, ան գրաւեց: Երբ պարսից զօրքը մտաւ քաղաք, սուրի մատնեց ողջ բնակչութիւնը: Կոտորուեցաւ 57 000 մարդ եւ գերի վերցուեցաւ 35 000 մարդ: Անոնց թիւին գերեվարուեցաւ նաեւ՝ Զաքարիայ հայրապետը: Ապա Պարսիկները մտան Սուրբ

Յարութեան տաճարը, բռնագրաւեցին Աստուածընկալ սուրբ Խաչը եւ տաճարի ոսկեայ ու արծաթեայ սպասները, իսկ քաղաքը այրեցին: Յետոյ զօրավարը գերիներուն հրամայեց քաղաքը վերստին կառուցել եւ բոլոր Հրեաներուն արտաքսել, իսկ ինքը պատուական Խաչը տարաւ Պարսկաստան: Երբ զօրքը կը մօտենար թագաւորանիստ քաղաքին, Խոսրով թագաւորը ընդառաջ ելաւ՝ դիմաւորելու Տէրունական Խաչին, որմէ Քրիստոսի Խաչը ակամայ փառաւորուեցաւ: Երբ Քրիստոսի Խաչը այդպիսի պատիւով մտաւ քաղաք, Պարսից թագաւորը մեծ պատիւով պահեց իր գանձարանին մէջ եւ Խաչին առջեւ անշէջ կանթեղ մըն էր որ մշտապէս կը պահէր այդ:

Քրիստոնեաները, զրկուելով իրենց սրբութենէն, յայտնուեցան այնպիսի անմխիթար վիճակի մէջ, ինչպէս ժամանակին յայտնուած էին Հրեաները, երբ Փղշտացիները գերեվարած էին Աստուծոյ Ուխտի տապանակը: Սակայն Տիրոջ խաչը, յայտնուելով Պարսկաստանի մէջ, մեծ փառքի արժանացաւ, ինչպէս եւ Տապանակը Ազոտոսի մէջ (տե՛ս Ա Թագ. Ե): Տեղաբնակները Տիրոջ խաչին կը վերաբերէին մեծ երկիւղածութեամբ եւ կ'ըսէին, որ Քրիստոնեաներու Աստուածը իրենց մօտ եկած է: Անկէ անոնց սիրտերը այնպիսի ահով կը տոգորուէին, որ Հեթանոս ըլլալով հանդերձ՝ չէին համարձակեր վնասել խաչափայտը, եւ նոյնիսկ վրան եղած թանկարժէք զարդերուն չէին դպչեր: Շատերն ալ այդ ահէն կը դիմէին տեղաբնակ Քրիստոնեաներուն եւ անոնցմէ լսելով Աւետարանի խօսքը, Քրիստոնէութիւն կ'ընդունէին: Այնուհետեւ Հերակլ կայսրը օգնութեան կանչեց ճենաց Խական թագաւորին: Հերակլին իր ռազմական օժանդակութիւնը կը բերէր նաեւ՝ Հայկական կողմը՝ զօրավար Մժեժ Գնունի գլխաւորութեամբ, որուն միացան նաեւ՝ Պարսկահպատակ Հայերը: Սակայն Խոսրով թագաւորի հզօր բանակին ճնշման տակ ճենաց թագաւորը անցաւ Խոսրովին կողմը, եւ Հերակլ կայսրը մեծ պարտութիւն կրեց: Այդ պարտութենէն յետոյ ան քուրձ հագաւ, հանեց իր թագն ու թագաւորական ծիրանին եւ մոխիրի վրայ ինալով՝ երեք օր շարունակ աղօթեց՝ բարեխօս ունենալով Մարիամ Աստուածածինին: Չորրորդ օրը ան ստացաւ աղօթքին պտուղը. տեսիլքով անոր յայտնուեցաւ, որ պէտք է յաղթէ այդ պատերազմին մէջ: Եւ իսկապէս, ճակատամարտին մէջ Հերակլը յաղթեց, Խոսրովը սպանուեցաւ, իսկ անոր բանակին մնացորդը փախչեցաւ:

Հերակլ կայսրը մեծ զօրքով կու գայ արեւելք եւ կը պահանջէ Սուրբ Խաչը, որ անմիջապէս կը տրուի: Սկիզբը Սուրբ Խաչը Պարսկաստանէն հանդիսաւոր թափօրով կը փոխադրուի Հայոց Կարին քաղաքը, ապա այդտեղէն՝ Կոստանդնուպոլիս եւ յետոյ՝ Երուսաղէմ: Խաչափայտը աննկարագրելիօրէն կը մխիթարէ ու կ'ոգեւորէ բարեպաշտ հաւատացեալներուն: Գերեդարձութեան ճանապարհին Խաչը գրեթէ ամէն տեղ կը բարձրացուի եւ ամենուր ցնծութիւն կը յառաջացնէ, որ

կարծես կը վերապրէր Քրիստոսի Յարութիւնը: Այդ դէպքերն ալ պատճառ դարձան «Խաչվերացի» տօնին հաստատման համար:
Այդ առիթով է որ Կարնոյ դաշտի Հարաւ-Արեւելեան կողմը բարձրացող լեռներուն մեծ գագաթը Խաչափայտ կը կոչուի: Այդ լեռան սարահարթին վրայ կը բխի սառնորակ ջուրի աղբիւր, որ ուխտատեղի դարձած է: Տեղական աւանդութիւնը կը պատմէ, որ Խաչը յանձնելէն յետոյ Պարսիկները կրկին կը փորձեն այդ ետ վերցնել: Հայերը, խաչափայտը այնտեղ թողելով, ետ կը մղեն Պարսկական կողմի յարձակումը եւ երբ կը վերադառնան խաչափայտը վերցնելու, կը տեսնեն, որ Խաչին դրուած տեղէն վճիտ աղբիւր կը բխի: Նոյնանուն լեռներու ստորոտին կայ Խաչկայ վանքը, ուր Խաչվերացի սքանչելի տօնին առիթով ժամանակին բազում ուխտաւորներ կ'այցելէին:

Խաչվերացի տօնը կը կատարուի մեծ հանդէսով: Երեկոյեան ափսէի մը վրայ կը բազմեցնեն Կենաց փայտի մասունք պարունակող խաչը, ան կը զարդարեն ռեհանով ու բազմերանգ ծաղիկներով եւ վրան վարդաջուր կը ցօղեն: Ապա խաչը թափօրով կը բերեն եկեղեցւոյ գաւիթ եւ անով կը տեառնագրեն աշխարհի չորս կողմերը: Այդ օրը կ'ուրախանայ երկինքը, կը ցնծայ երկիրը եւ կը պայծառանայ Մայր Եկեղեցին, քանզի քառաթեւ վայելչական պսակով զարդարեց իր գլուխը, որ սրսկուած է Աստուծոյ Որդիին Արեամբ: Աստուածային նշանը՝ տիեզերքի փրկագործ ու աշխարհակեցուցիչ Խաչը, կանգնեցաւ տիեզերքին մէջ, ցոլացած բարձրացաւ Սուրբ Գողգոթային վրայ, արփիափայլ ճառագայթներով փայլեցաւ Երուսաղէմին մէջ, աւելի պայծառ, քան արեգակը, եւ տարածելով բոցաճաճանչ ճառագայթափայլ հրանիւթ թեւերը՝ լեցուց տիեզերքի բոլոր ոլորտները՝ իր ամենայաղթ ու պահապան զօրութեամբ ծածկելով բոլոր Հեթանոսներուն:
Խաչի չորս թեւերը մէկը միւսէն տարբեր ուղղութիւններով կը ներգործեն: Խաչի ներքեւի պատուանդանը կ'աւերէ դժոխքը, վերեւի գլուխը Դրախտի դուռը կը բանայ, աջ թեւը մարդկային ցեղին շնորհներ կը բաշխէ, իսկ ձախը՝ կը սաստէ եւ կը պատուհասէ դեւերը:

- Մարգարէները խաչը «հեռուէն» քարոզեցին, եւ երջանիկ առաքեալները խաչով երեւցան ահաւոր դեւերուն:
- Սուրբ վկաները խաչով յաղթեցին անօրէն բռնաւորներուն, եւ անապատաբնակները խաչով կրօնաւորուելով պահպանուեցան:
- Սուրբ եւ պարկեշտ կոյսերը խաչով կը զգաստանան, եւ քահանաները խաչով կարգը կը կատարեն:

Ժողովրդական աւանդոյթին մէջ Խաչվերացը կամ «Սըրբխեչը» աշնան սկիզբը խորհրդանշուող ուրախ տօն է: Տօնի նախօրեակին՝ Շաբաթ օրը կանայք խմորեղէն կը պատրաստեն, տղամարդիկ՝ ուլ կը մորթեն ու գորովի կը պատրաստեն: Ժողովրդական աւանդութեան համաձայն ուլի

միսը եւ ձաւարով փիլաւը այդ օրուայ առանձնայատուկ ուտելիքներն են, առանց որոնց տօնը լիարժէք չի կրնար ըլլալ:
Խաչվերացի յաջորդ օրը մեռելոց է: Այդ օրը եկեղեցիներուն մէջ կը մատուցուի Ս. Պատարագ, կը կատարուի հոգեհանգստեան կարգ, որմէ յետոյ կ'այցելեն հանգուցեալներու շիրիմները:

Holidays

Saturday, September 11, 20201
Eve of the Feast of Exaltation of the Holy Cross

The Saturday preceding the Feast of the Exaltation of the Holy Cross is the eve of the feast. That day, as well as the Tuesday, Wednesday and Thursday following the Feast of the Exaltation of the Holy Cross are the feasts of the Holy Church.

Sunday, September 12, 2021
Feast of Exaltation of the Holy Cross

Feast of the Exaltation of the Holy Cross is the last one of the five major feasts of the Armenian Apostolic Church. It is the most important feast among the feasts dedicated to the Holy Cross, as it is dedicated to the history of the return of the Holy Cross from imprisonment, its elevation and glorification. In the Armenian Apostolic Church, the Feast of the Exaltation of the Holy Cross is celebrated on Sunday during the period between September 11-17. This year that date is September 17, and the Monday following the Feast is a Memorial Day.
In 610 A. D, the Persian King Khosrov with a large army attacks the Byzantine Empire. Enthusiastic about the initial victory, in 614 A. D. the Persian army enters Jerusalem. Many people are killed, and many are imprisoned. Pontiff Zakaria, the Patriarch of Jerusalem is imprisoned, too. However, the Persians are not satisfied and enter the Church of Holy Sepulcher and take the Holy Cross kept in the Church. The Holy Cross had been found and installed in the Church for the Christians to worship by Heghineh, the mother of the King Costandianos, in the beginning of the 4th century.

In 628 A. D., the Byzantine army led by the King Herakles fight against the Persians to return the Holy Cross. The Armenian army regiment, led by Mzhezh Gnounie, suppor-ted the Persian army. With the Lord’s help the Byzantine ar-my wins the battle. The Holy Cross is solemnly brought to the Armenian town Karin, from where it is carried to Constantinople, and then - to Jerusalem. On the way the Holy Cross was raised for the people to see and worship.
For Christians the Cross is God’s power and strength and pride of all prides, on which Christ’s innocent blood was shed. By means of the Cross Jesus proved His love towards mankind, and the Cross became for us the symbol of hope, love and saving.

ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՐՁԱԿՈՒՄ
(ՄԵՂՔԵՐՈՒ ԹՈՂՈՒԹԻՒՆ,
ՈՐ Կ'ԸՍԷ ՔԱՀԱՆԱՆ)

Թող ամենազօր Տէրը ողորմի քեզի
եւ թողութիւն շնորհէ քու բոլոր
յանցանքներուդ եւ թէ՛ մոռցածներուդ:
Իսկ ես՝ քահանայական կարգիս իշխանութեամբ եւ
աստուածային հրամանին համաձայն՝ թէ
«ինչ որ երկրի վրայ արձակէք՝ երկինքի մէջ
ալ արձակուած պիտի ըլլայ»,
Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով
կ'արձակեմ քեզ՝ մտածումով, խօսքով ու գործգով
կատարած բոլոր մեղքերէդ,
եւ վերստին քեզ կը յանձնեմ
սուրբ Եկեղեցւոյ խորհուրդներուն,
որպէսզի ինչ բարիք որ գործես՝
Աստուծոյ քով բարեգործութիւն նկատուի
քեզի համար եւ հասնիս յաւիտենական կեանքի փառքին. Ամէն:

ABSOLUTION
(DONNÉE PAR LE PRÊTRE)

Que Dieu ami des hommes, te fasse miséricorde
et t’accorde la rémission et te pardonne toutes tes transgressions,
celles que tu as confessées comme celles que tu as oubliées.
Et moi, en vertu de mon ordination au ministère sacerdotal,
conformément au commandement divin :
« ce que tu délieras sur terre sera délié dans les cieux »,
je te délie de toutes les péchés commis en pensée,
en paroles et en actes, au nom du Père, du Fils et du Saint-Esprit
et je te remets aux saints mystères de l’Eglise
afin que toutes les bonnes actions
que tu accompliras dorénavant contribuent
à ton salut et à ta gloire dans la vie éternelle. Amen.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE REPOS DE L'ÂME

SERVICE FOR THE REPOSE OF SOUL

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

OFFICE DE REQUIEM

LUNDI, LE 13 SEPTEMBRE 2021

COMMEMORATION POUR TOUS LES DÉFUNTS

Տ. եւ Տիկ. Կարօ եւ Նուարդ Բարաղամեան
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ ծնողաց՝
ԲԱՐԱՂԱՄԵԱՆ, ԲԵՔՄԵԶԵԱՆ,
ԷՕԶՈՒՆՃԵԱՆ ԵՒ ՊԱԶՊԱԶԵԱՆ
(PARAGAMYAN, PEKMEZYAN, OZUNCIYAN,
& BAZBAZYAN FAMILIES)
գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ:

Տիկ. Սիլվա Ֆէրահ
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրէ
իր սիրեցեալ հարազատներուն՝
ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՄԱՐԻԱՄ
ԷԼՄՕՔԵԱՆՆԵՐՈՒ
(GARABED & MARIAM ELMOKIAN)
հոգիներուն ի հանգիստ:

Տէր եւ Տիկ. Վարուժան եւ Սիլվա
Մանկասարեաններ
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ հարազատներուն՝
ՌԱՖՖԻ ՃԻԿԷՐԵԱՆԻ
(RAFFI JIKERIAN)
ԷԼԷՆ ԵՒ ԴԱՆԻԷԼ ՃԻԿԷՐԵԱՆՆԵՐՈՒ
(HELLEN & TANIEL JIKERIAN)
ՎԱԼԱՆԹԻՆ ԵՒ ՏԻԳՐԱՆ
ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆՆԵՐՈՒ
(VALANTINE & DIKRAN MANGASSARIAN)
Ինչպէս նաեւ
ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ, ՃԻԿԷՐԵԱՆ, ՍԻՒԼԻՒՔՃԵԱՆ,

ՇԱՄՄԱՍԵԱՆ, ՄԵՐՃԱՆԵԱՆ,
ՓԵՇՏԸՄԱԼՃԵԱՆ, ԳԱՓԼԱՆՃԵԱՆ,
ԹՈՆԴԵԱՆ ԵՒ ԹԵՐՋԵԱՆ
գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ:

Տ. եւ Տիկ. Մուրատ եւ Անահիտ Տէմիրտէօվեն
եւ զաւակը՝ Ալէն,
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ հարազատներուն՝
ՏԷՄԻՐՏԷՕՎԵՆ, ՄՈՄՃԵԱՆ, ԹԱԹԱՐԵԱՆ,
ՉԱՐՔՃԵԱՆ ԵՒ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ
(DEMIRDOGEN, MOMDJIAN, TATARIAN,
TCHARKJIAN, & MANUELIAN)
գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ:

Եսայեան եւ Մաթեան ընտանիքներ
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ մօրաքրոջ՝
ՎԵՐԺԻՆ ԹՈՐՈՍԵԱՆԻ
(VERGINE TOROSIAN)
մահուան առաջին տարելիցին առիթով:

Տ. եւ Տիկ. Պետօ եւ Քնար Մելիք
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ հարազատներուն՝
ՄԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵԼԻՔ
(MAROUTIAN & MELIK)
գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ:

Կիրակի, 12 Սեպտեմբեր 2021
Խաչվերացի տօնին առիթով տօնելի անուններն են.
Խաչիկ, Խաչատուր,
Խաչեր, Խաչօ, Խեչօ, Խաչանուշ եւ Ռեհան
Կը շնորհաւորենք վերոյիշեալ անունները կրողներուն անուանակոչութիւնը լաւագոյն բարեմաղթութիւններով:
On Sunday, September 12, 2021
the Armenian Church will celebrate the Feast of Exaltation of the Holy Cross.
On this occasion the following names are celebrated:
Khachig, Khachadour,
Khacher, Khacho, Khecho, Khachanoush, & Rehan.
Our congratulations to all with the best wishes.

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON À L'ÉGLISE

DONATION FOR THE CHURCH

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC Donations of September have been received with great appreciation 2021

CHURCH:

Mr. & Mrs. Stephan Yazedjian $400
Mrs. Arpie Gould $250
Miss Nanor Balian $50

BASILIC OFFERING:

Sponsored by Atamian Family

FEAST OF THE ASDVATZATZIN GRAPE BLESSING:

Mr. & Mrs. Varouj & Hasmig Margossian $100

FEAST OF THE EXALTATION OF THE HOLY CROSS:

Mr. Setrak Dakessian $50

HOKEHANKISD (Requiem Services) IN MEMORY OF:

THE LATE RENATA ISRAELIAN:
Mr. & Mrs. Adelaide Israelian $200
Mr. & Mrs. Vartan & Maria Djerrahian $200

THE LATE ARDEMIS OHANNESIAN:
Garo Boghosian $100
Maral Boghossian $50

THE LATE JEAN DERTADIAN:
Mrs. Dirouhi Kalaidjian $100

HOKEHANKISD MERELOTZ IN MEMORY OF:

THE LATE PARAGAMYAN FAMILY:
Mr. & Mrs. Garo & Nuvart Paragamyan $100

Այս շաբթուայ
Ս. Խաչի ծաղիկներու
փունջը
կը հովանաւորէ՝
GLAMOUR ԾԱՂԿԱՎԱՃԱՌԸ
The Holy Cross Flowers
of this week
sponsored by:
FLEURS GLAMOUR



ՏՕՆԱՑՈՅՑ

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ – SEPTEMBRE

13, Երկուշաբթի – Տօն է Խաչի – Յիշատակ Մեռելոց:
Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց
Lundi 13 – Fête de la Croix.
Office de Requiem pour tous les défunts.

14, Երեքշաբթի – Տօն է Եկեղեցւոյ:
Mardi 14 – Fête de l'Église.

15, Չորեքշաբթի – Պահք: Տօն է Եկեղեցւոյ:
Mercredi 15 – Jeûne. Fête de l'Église.

16, Հինգշաբթի – Տօն է Եկեղեցւոյ:
Jeudi **16** – Fête de l'Église.

17, Ուրբաթ – Պահք: Տօն է Խաչի:
Vendredi 17 – Jeûne. Fête de la Croix.

18, Շաբաթ – Տօն է Խաչի:
Մաղթանք Հանրապետական՝ Հայաստանի
Անկախութեան հռչակման տարեդարձ:
Samedi **18** – Fête de la Croix.
Anniversaire de la proclamation
de l'indépendance de la République d'Arménie

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ՍԻՐԱԼԻՐ ՀՐԱՒԷՐ ԲՈԼՈՐԻՆ

CORDIAL INVITATION TO ALL

Հաճոյքով կը յայտնենք մեր հաւատացեալներուն թէ
շարունակաբար Եկեղեցին բաց է շաբթուան ընթացքին
Երկուշաբթիէն – Ուրբաթ
10:30-էն մինչեւ կ.ե. ժամը 4:30
Շաբաթ –11:00 – 3:00
Կիրակի- 9:30 – 2:00
Անոնք որոնք իրենց ուխտի կատարման համար կը փափաքին
այցելել Եկեղեցի, աղօթելու եւ մոմավառութեան համար, կրնան
շարունակել իրենց աստուածահաճոյ առաքելութիւնը:
Եկեղեցւոյ դռները բաց են մեր բոլոր հաւատացեալներուն համար:

We are pleased to inform our faithful that during weekdays the
Church is open from:
Saturday - Friday
At 10:30 AM to 4:30 PM
Saturday – 11:00 AM – 3:00 PM
Sunday – 9:30 AM – 2:00 PM
Those who wish to visit the Church to fulfill their covenant,
pray, and light candles can continue their mission.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008 stgregorychurch@gmail.com

ՏՕՆ

ԽԱՉՎԵՐԱՑ

FÊTE MAJEURE DE L'EXALTATION DE LA SAINTE CROIX

LIVE Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՏԱՂԱՒԱՐ ՏՕՆԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ
LA SAINTE MESSE DE LA FÊTE MAJEURE

Կիրակի, 12 Սեպտեմբեր 2021
Dimanche, 12 Septembre 2021

ՊԱՏԱՐԱԳԻՉ ԵՒ ՔԱՐՈԶԻՉ
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՑ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ
CÉLÉBRATION ET L'HOMÉLIE
RÈV. PÉRE DAVID MARGARYAN
PRÊTRE PAROISSIAL

Առաւօտեան ժամերգութիւն - Matines à 09:30
Ս. Պատարագ - Sainte Messe 10:30
Ռեհանի օրհնութիւն - Bénédiction de basilic 12 -12 :30

Յաւարտ Ս. Պատարագի

ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՇԽՈՒՄ

Եկեղեցւոյ բակին մէջ:

BÉNÉDICTION

MADAGH ET DISTRIBUTION

Dans la cour de l'Église

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉ

ՄԼԱՐ ՏԱՃԱՐ

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ԽՄՈՐԵՂԷՆԻ ԵՒ ՈՒՏԵՍՏԵՂԷՆԻ ՏՕՆԱՎԱՃԱՌ

ԿԻՐԱԿԻ՝ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021

Կազմակերպութեամբ՝
Տիկնանց Յանձնախումբին եւ Օժանդակներուն
Առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. 3:00
Bernard պողոտային վրայ:

Անհրաժեշտ է պահպանել առողջապահական
ուղղեցոյցները.-
2 մեթր ֆիզիքական հեռաւորութիւն եւ դիմակի գործածութիւն:

MINI-BAKE SALE

ON THE FEAST OF THE EXALTATION OF THE HOLY CROSS

SUNDAY, 12 SEPTEBER 2021

Avenue Bernard

Organized by Ladies Auxiliary
From 10:00 AM to 3:00 PM.

It is necessary to keep the guidelines of a pandemic:
keeping 2- meter phys ical distancing & the use of a mask

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Կիրակի, 12 Սեպտեմբեր 2021 Խաչվերացի տաղաւար տօնն է, այս առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի տօնին յաջորդող օրը

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

Երկուշաբթի, 13 Սեպտեմբեր 2021

առաւօտեան ժամը 11:00-ին:

Հաւատացեալներ, որոնք կը փափաքին հոգեհանգստեան պաշտօն խնդրել եւ մասնակցիլ Երկուշաբթի ննջեցելոց յիշատակութեան օրուան առիթով կրնան դիմել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066:

On Sunday, September 12, 2021, is a major feast of the Exaltation of the Holy Cross, on this occasion the requiem services will be held on the

REMEMBRANCE DAY OF THE DEAD

MERELOTZ - REQUIEM SERVICES

Monday, September 13, 2021, at 11:00 AM

Our parishioners who wish to schedule a requiem service for Monday Remembrance Day of the Dead (Merelotz) can contact the Church office at (514)279-3066.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
SAINT GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ՄԵՌԵԼՈՑ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐՈՒԱՅ
ԳԵՐԵԶՄԱՆԻ ԱՅՑ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
MEMORIAL DAY
GRAVE VISITING & BLESSING



MONT-ROYAL CEMETERY
1297 Foret Rd, Outremont, Quebec H2V 2P9

Խաչվերացի Տաղաւար տօնին յաջորդող Երկուշաբթի օրը, 13 Սեպտեմբերին,
Մեռելոց Յիշատակի օր է եւ հաւատացեալները կ'այցելեն իրենց ննջեցեալ հարազատներուն շիրիմները աղօթքի եւ օրհնութեան համար:
Այդ օրը հոգեւոր հովիւը կէսօրուան ժամը 12:00 -1:30 ժամանակահատուածին,
պիտի այցելէ Mont-Royal գերեզմանատուն
ուր պիտի մատուցէ աղօթք եւ օրհնութիւն:
Հաւատացեալներ, որոնք կը փափաքին իրենց ննջեցեալ հարազատներու շիրիմներուն համար հոգեւոր հովիւի անհատական այցը, աղօթքն ու օրհնութիւնը, կրնան հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066 կամ անմիջական հոգեւոր հովիւին՝ (514) 448-2809:

Following the Feast of Exaltation of the Holy Cross,
on Monday, September 13 is
Memorial Day or Remembrance of the Dead.
The faithful visit the cemeteries to honor their departed loved ones.
On that day the Parish Priest shall visit
the Mont-Royal cemetery from 12:00-1:30 pm
to offer a prayer and blessing to the individual graves.
If you wish to request a graveside prayer and blessing for your departed loved ones, please contact the church office at
(514)279-3066 or the Parish Priest at (514)448-2809.

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

LIVE Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Չորեքշաբթի, 15 Սեպտեմբեր 2021
Երեկոյեան ժամը 5:00-ին:
Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի հետ:

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից ըլլալու երեկոյեան ժամերգութեան առցանց Եկեղեցւոյ դիմատետրի էջով:

«Եւ այսպէս ըրէք, գիտնալով թէ ժամանակն է, որ քունէն արթննանք. վասն զի հիմա մօտ է մեզի փրկութիւնը՝ քան թէ այն ատեն որ հաւատացինք» (Հռոմ. 13:11):

Աղօթաբոյր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ հաւատացեալներուն:

SERVICE DU SOIR ET PRIÈRE DE GUÉRISON
avec le R.P. David Margaryan
Mercredi, le 15 Septembre 2021 à 17h00.

Nous invitons nos chers fidèles à participer à service du soir via la page Facebook de l'Église.

"Cela importe d'autant plus que vous savez en quel temps nous sommes: c'est l'heure de vous réveiller enfin du sommeil, car maintenant le salut est plus près de nous que lorsque nous avons cru" (Romans 13 :11).

Nous souhaitons des moments de prière à nos fidèles.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԱՄԵՆԱՄՍԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Առցանց – En direct/Live

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Շաբաթ, 25 Սեպտեմբեր 2021

ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

«Իսկ դուն երբ աղօթք կ՚ընես, մտիր քու ներքին սենեակդ ու դուռդ գոցէ եւ աղօթք ըրէ քու Հօրդ որ գաղտուկ տեղ կը գտնուի եւ քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ»: (Մտթ. 6:6):

Samedi, le 25 Septembre 2021

Office du soir à 17h00.

''Mais quand tu pries, entre dans ta chambre, ferme ta porte, et prie ton Père qui est là dans le lieu secret; et ton Père, qui voit dans le secret, te le rendra.'' (Matthieu 6 :6).

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066:

Si vous avez un changement d'adresse, courriel ou numéro de téléphone, s'il-vous-plait, veuillez informer de vos nouvelles informations au Secrétariat de l'Église (514) 279-3066.

If you have any changes in your address, e-mail or phone numbers please do not forget to inform us call at (514) 279-3066.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՄՈՆԹՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քէպէք նահանգի իշխանութեան, առողջապահական կառոյցներու յայտարարութեան եւ Գանատահայոց Թեմի հրահանգներուն՝ կանխարգիլելու համար թագաժահրի Covid-19 տարածման վտանգը, **ներկայիս Քէպէք նահանգը անցնելով կանաչ գօտիի, որուն համաձայն կը կիրարկուի հետեւեալ համակարգը .-**

- Մկրտութիւններու, պսակադրութիւններու եւ յուղարկաւորութիւններու պարագային **արտօնուած է առաւելագոյնը 250 հոգիի ներկայութիւն:** Դիմակները կրնան հեռացուիլ , երբ մարդիկ նստած են: Միեւնոյն հասցէին չբնակող մարդկանց միջեւ հեռաւորութիւնը պէտք է յարգուի:
- Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Ս. Պատարագներուն, ժամերգութիւններուն եւ մնացեալ արարողութիւններուն **առաւելագոյնը 250 հոգիի ներկայութիւն:**

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Մնացեալ հարցերու համար կրնաք դիմել՝
Հոգեւոր Հովիւին, հեռ. (514) 448-2809:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

IMPORTANT NOTICE

We would like to inform our parishioners that following the Quebec State Authority, a statement from health care providers, and instructions from the Armenian Diocese of Canada to prevent the spread of Covid-19,

Quebec currently is in the green zone,
as of according to new guidelines will be as follows:

- **Up to 250 people are allowed** in the case of baptisms, marriages & funeral., the Face coverings or masks can be removed when people are seated. Distancing between people who do not reside at the same address must be respected.
- Church Sunday Liturgies, prayer services, and other ceremonies the attendance **is allowed a maximum of 250 people.**

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

For other questions, you can contact the Parish Priest tel. (514) 448-2809.

We wish you good health and all the best and hope to keep you informed in writing of any changes or other details.

CHURCH OFFICE

ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

Note Importante

Nous vous informons chers croyants que conformément aux directives du gouvernement du Québec, après la déclaration les autorités de santé publique et des instructions du diocèse de l'Église apostolique arménienne au Canada, pour empêcher la propagation du virus de Covid-19,

le Québec est présentement dans la zone verte, en date du selon l'Église selon les nouveaux directeurs actuels sera la suivante :

- **Jusqu'à 250 personnes sont autorisées** en cas de baptême, mariages et Funérailles. Les couvre-visages ou les masques peuvent être retirés lorsque les personnes sont assises. La distanciation entre les personnes qui ne résident pas à la même adresse doit être respectée.
- Liturgies du dimanche de l'Église, services de prière et autres cérémonies, la participation maximale **est autorisée une capacité maximale de 250 personnes.**

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Pour toutes autres questions, vous pouvez contacter le prêtre au tel: (514) 448-2809

Nous vous souhaitons surtout de bonne santé et le meilleur et espérons vous tenir informé par écrit de tout changement ou d'autres détails.

BUREAU DE L'ÉGLISE

ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL
615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ / ATTENTION

Սիրելի հաւատացեալներ
Ձեր ազնիւ ուշադրութեան կը յանձնենք թէ
առժամաբար Bernard փողոցին վրայ գտնուող
"Centre d'Éducation des Adultes Outremont" դպրոցի կայանատեղին (parking)
շինարարութեան պատճառով գոցուած է մինչեւ նոր տնօրինութիւն:
Շնորհակալութիւն

PARKING

Our beloved parishioners!
We bring to your attention that the parking lot of the Center d'Éducation des Adultes
Outremont that have been located on the Bernard street
temporarily has been closed due to construction.
We will inform vou until the new administration. Thank vou!

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2